

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻՆԵ ԱՐԱՄՅԱՅԻՄԻ ԱՆԴՐԱՍՅԱՆ

ՋՈՆ ԶԻՎԵՐԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան -2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆեսոր Տ. Ս. Սիմյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Վ. Եղիազարյան

բ.գ.թ., պրոֆեսոր Ս. Է. Նուրալովա

**Առաջատար
կազմակերպություն՝**

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. նոյեմբերի 7-ին, ժամը 14³⁰-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 066 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, թիվ 422 լսարան)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. սեպտեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
բ.գ.թ., դոցենտ



Ա. Վ. ԵԳԱՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է ամերիկացի գրող Ջոն Վիլյամ Զիվերի (1912-1984) փոքր արձակի հիմնախնդիրներին: Ջոն Զիվերն իր ստեղծագործական կյանքի ընթացքում գրել է հինգ վեպ և երկու հարյուրից ավելի պատմվածքներ, որոնք ամփոփվել են պատմվածքների յոթ ժողովածուներում: Գրողն իր պատմվածքներում ներկայացնում է առօրեական ճշմարտություններով լի հարաբերություններ, պատկերներ, վիճակներ, որոնք կարող են արտաքուստ այդքան էական չլինել, բայց իրականում ունենալ ընդհանրական, խորքային կողմեր: Ջոն Զիվերը, շարունակելով ամերիկյան պատմվածքի գրական ավանդները, ստեղծում է իրեն հատուկ ոճ՝ ստեղծագործություններում չափազանց սուր կերպով արտացոլելով ամերիկյան արվարձանի բնակիչների կյանքը, որը մասամբ ներշնչված է նաև գրողի՝ արվարձանում բնակության փորձով:

Ջոն Զիվերն այն քիչ թվով գրողներից է, որն իրեն նույնացրել է իր ապրած ժամանակի հետ, ներթափանցել շրջապատող միջավայրի և մարդկանց զգացողությունների խորքը, ստեղծել գոյություն ունեցող իրականությունից զատ այլ իրականություն, երևակայական քաղաք, որը հեշտությամբ կարող ենք նմանեցնել Վիլյամ Ֆոլքների Յոքնապատոֆին, Շերվուդ Անդերսոնի Ուինսթուրգ կամ Թոմաս Հարդիի Վեսթքս մտացածին քաղաքներին:

Զիվերի փոքր արձակի նորարարությունը հատկանշվում է հատկապես կյանքի նկատմամբ իրատեսությամբ և սովորական ամերիկացու ապրելակերպի մանրագնին դիտարկմամբ ու արտացոլմամբ: Զիվերը կարծես կամուրջ է դառնում 20-րդ դարի առաջին կեսի գրողների՝ Էոնեստ Հեմինգուեյի, Վիլյամ Ֆոլքների, Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդի և ուրիշների ու Երկրորդ աշխարհամարտին հաջորդած գրողների միջև: Ջոն Զիվերի ստեղծագործության վրա մեծ ազդեցություն են թողել հատկապես «կորուսյալ սերնդի» ներկայացուցիչները: Նրա գրական մոտեցումներն առավելապես համընկնում են այս շրջանի գրողների գաղափարներին և աշխարհընկալմանը: Գրողն իր վաղ շրջանի ստեղծագործություններում օգտագործում է հեմինգուեյյան երկխոսության գերակշռության սկզբունքը, տեղի ունեցող իրադարձությունների մանրամասն նկարագրությունը և «ոչ էական» խոսակցությունների մեջ հերոսների թաքնված անհանգստությունները: Իր արձակում համադրում է նաև Ն. Հոթորնի, Հ. Ջեյմսի, Օ'Հենրիի, Շ. Անդերսոնի, Ֆ. Ֆիցջերալդի, ինչպես նաև ռուս գրող Ա. Զեխովի գրական ավանդները:

Սույն աշխատանքի լիարժեքությունն ապահովելու նպատակով հաշվի են առնվել բազմաթիվ գրականագետների՝ Ալֆրեդ Քեյզին¹, Ջորջ Հանթի², Ջորջ Գարեթի³, Էուջին Չեզնիքի⁴, Ջոն Դայերի⁵, Թիմոթի Օբրիի⁶, Քաթրին Ջուրքայի⁷,

¹ Alfred Kazin, O Hara, Cheever & Updike // R. G. Collins, Critical essays on John Cheever. Boston, Massachusetts: G. K. Hall & Co., 1982.

² George Hunt, Beyond the Cheeveresque: A Style Both Lyrical and idiosyncratic // R. G. Collins, Critical essays on John Cheever Boston. Massachusetts: G. K. Hall & Co., 1982.

³ George Garrett, John Cheever and the Charms of Innocence: The Craft of The Wapshot Scandal // G. Collins, Critical essays on John Cheever. Boston, Massachusetts: G. K. Hall & Co., 1982.

Բալֆ Վուդի⁸, Մքոթ Դոնալդսոնի⁹ Վալենտինա Օլենայի¹⁰ և այլոց ուսումնասիրությունները:

ԹԵՄԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ գրականագիտության մեջ մինչ օրս Ջոն Չիվերի վերաբերող ուսումնասիրություններ չկան, ուստի սույն աշխատանքի նորությունը առաջին հերթին Ջոն Չիվեր արձակագրին հայ ընթերցողին ներկայացնելն է: Առաջին անգամ հնարավորություն է ընձեռնվում ծանոթանալու Ջոն Չիվերի պատմվածքներում արժարժված թեմաներին՝ սոցիալական հարցեր, նյութականի և հոգևորի հակասականություն, ընտանեկան խնդիրներ, ամուսինների միջև տարաձայնություններ, մարդու՝ հասարակությունից օտարման հարցեր, որոնք բավական արդիական են: Առայսօր աշխատությունը կարող ենք արդիական համարել նաև ռուս չիվերագիտության համատեքստում: Ռուս գրականագիտության մեջ դեռևս Չիվերին վերաբերող գիտական ընդգրկուն ուսումնասիրություններ չկան:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն աշխատության հիմնական նպատակն է ուսումնասիրել Ջոն Չիվերի պատմվածքների խնդրահարույց թեմաները: Այն է՝ Ամերիկայի սոցիալական խնդիրներից առաջացած հակասությունները, մարդու և արտաքին աշխարհի հարաբերակցությունը և դրա հետևանքները, ընտանիքի թեման և մեկուսի անհատը, որը բարդություններ ունի ոչ միայն ինքն իր հետ, այլև ուրիշների հետ հարաբերություններում, Չիվերի արվարձանի ներքին օրինաչափությունները, դրանց ընդդիմացող մարդը, նրա մտածողության և վարքի առանձնահատկությունները:

Մեր նպատակին հասնելու համար փորձել ենք լուծել հետևյալ խնդիրները՝

-Ներկայացնել Ջոն Չիվերի պատկերած ամերիկյան արվարձանի հակասությունները,

-Ուսումնասիրել նյութական և սոցիալական խնդիրների դրսևորումը ընտանեկան հարաբերություններում և առանձին մարդու գիտակցության մեջ,

⁴ Eugene Chesnick, The Domesticated Stroke of John Cheever // R.G.Collins, Critical Essays on John Cheever. G. K. Hall & Co. Boston, Massachusetts: G. K. Hall & Co., 1982.

⁵ John Dyer, John Cheever: Parody and The Suburban Aesthetic. Virginia:University of Virginia, 1996 /<http://xroads.virginia.edu/~ma95/dyer/cheever4.html>-20.05.2019.

⁶ Timothy Aubry, John Cheever and management of middlebrow misery// Journal of Cultural Studies 3. Iowa: The University of Iowa, 2003,p. 64-83.

⁷ Jurca Catherine, White Diaspora: The Suburb and the Twentieth-Century American Novel. Princeton: Princeton University Press, 2001.

⁸ Ralph C. Wood, The Modest and Charitable Humanism of John Cheever // Christian Century, Nov. 17, 1982 / <http://www.religion-online.org/showarticle.asp?title=1353>-27.05.2019.

⁹ Scott Donaldson, Cheevers Shady Hill: A suburban Sequence, Modern american short story sequences, ed. J. Jerald Kennedy. New York, Cambridge university press, 1995.

¹⁰ Валентина И. Оленева, Социальные мотивы в американской новеллистике. Киев: Наукова Думка, 1978.

-Վերհանել ամերիկյան արվարձանում մարդու ապրելակերպի և մտածողության խնդիրները,

-Ուսումնասիրել ընտանիքի և անձի հոգեկան խնդիրը ամերիկյան արվարձանային միջավայրում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն են.

-Երկրորդ աշխարհամարտից հետո ամերիկյան կյանքի տարբեր ոլորտներում ի հայտ են գալիս հակասություններ,

-Մարդու հոգեբանությունը և գիտակցությունը երկփեղկված են, անկայուն ու անորոշ է դարձել նրա կյանքի հետագա ընթացքը,

-1950-ականներին ամերիկյան ընտանիքը ճգնաժամ է ապրում: Նկատելի են անձի հոգեկան անկման դրսևորումներ,

-Արվարձանային միջավայրն ունի քարացած բարքեր ու հստակ կարգուկանոն, որտեղ մարդու մտածողությունը և վարքը ենթարկվում են սահմանափակումների:

Առաջ քաշված դրույթներն ապացուցելու համար հենվել ենք գրականագիտական վերլուծության համադրական, ինչպես նաև պատմահամեմատաբանական և տրամաբանական մեթոդների ու մոտեցումների վրա: Ուսումնասիրության հիմնական օժանդակող նյութը ամերիկյան գրականագիտական հոդվածներն են, էսսեները: Հաշվի են առնված արևմտյան տարբեր դպրոցների մետալեզվով նկարագրված հետազոտությունները:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Օգտվելով բազմաթիվ գրականագիտական վերլուծություններից և քննադատական հոդվածներից՝ ի մի են բերվել և հանգամանալից ներկայացվել են Ջոն Զիվերի փոքր արձակի թեմատիկ խնդրահարույց հարցեր:

Ուսումնասիրված թեմաները՝ հասարակական հարցեր, նյութականի և հոգևորի հակասականություն, ընտանեկան խնդիրներ, ամուսինների միջև տարաձայնություններ, մարդու՝ հասարակությունից օտարման հարցեր, ամերիկյան գրականագետների հիմնական դիտարկումներից ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել: Հատկանշական է նաև, որ ամերիկյան գրականագետների ուշադրության կենտրոնում եղել են առավելապես Ջոն Զիվերի ուշ շրջանի գործերը, առաջին շրջանին վերաբերող վերլուծություններ գրեթե չկան, հետևաբար, մեր խնդիրն է եղել անդրադառնալ նաև առաջին շրջանի ստեղծագործություններին: Սա ևս կարող ենք համարել աշխատանքի նորույթներից մեկը: Այսպիսով, սույն ուսումնասիրությունը հայ իրականության մեջ գալիս է լրացնելու այն բացը, որն առկա է մինչ օրս:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ ներկայացված նյութերը կարող են օգտագործվել 20-րդ դարի ամերիկյան գրականության պատմության դասընթացների, թեմատիկ կամընտրական դասախոսությունների և սեմինարների անցկացման համար, ինչպես նաև Ջոն Զիվերի ստեղծագործությունն ուսումնասիրելիս:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Աշխատանքը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնը:

Ատենախոսության հիմնադրույթները գեկուցվել են ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրությամբ հաստատված գիտական ամսագրերում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սույն ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացությունից: Առաջին գլխում ներկայացվում է Ամերիկայի սոցիալական խնդիրներից առաջացած հակասությունները, որոնք հատկանշվում են մարդու արտաքին և ներքին աշխարհում, ուսումնասիրվում է մարդու և արտաքին աշխարհի հարաբերակցության թեման: Երկրորդ գլխում ուսումնասիրվում է ընտանեկան թեմատիկան Ջոն Զիվերի պատմվածքներում, ամուսնու և կնոջ հարաբերությունները, մարդու ներքին մղումները, որոնք սահմանափակվում են արվարձանային միջավայրի ու բարքերի ազդեցությամբ: Ուսումնասիրվում է նաև առանձին մարդը, որը բարդություն ունի ոչ միայն ինքն իր հետ, այլև՝ այլ անձանց հետ հարաբերություններում: Երրորդ գլխում ուսումնասիրվում է ամերիկյան արվարձանը, արվարձանի ներքին օրինաչափությունները, կանոնակարգերը ու դրանց ընդդիմացող մարդու կերպարը, ամերիկյան արվարձանում մարդու մտածողության և վարքի առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են արվարձանային օրինաչափություններով:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 135 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացվում է 20-րդ դարի երկրորդ կեսի ամերիկյան փոքր արձակի ընդհանուր նկարագիրը, Ջոն Զիվերի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, գրողի ստեղծագործական հմտությունները: Հիմնավորվում են ընտրված թեմայի արդիականությունը, շարադրված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, հիմնադրույթները, մեթոդական հիմքերը:

ԳԼՈՒԽ 1

ՋՈՆ ԶԻՎԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

1.1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՑԱՆՔԻ ԽՂԴԻՐՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՋՈՆ ԶԻՎԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ատենախոսության առաջին ենթագլխում մեր ուշադրության կենտրոնում Ջոն Զիվերի փոքր արձակում միջին խավի նյութական և հոգեկան վիճակների հակասությունների թեմատիկան է, հասարակական, սոցիալ-տնտեսական խնդիրների արծարծումները: Այս ամենը աներկբայորեն ազդում է մարդկային հարաբերությունների, մարդու էության ու հոգեբանության վրա, որոնցով էլ պայմանավորվում են նրա գործողությունները: Ձգտելով արվարձանային կյանքը ներկայացնել՝ Ջոն Զիվերը նկարագրում է այն իր ամբողջ բարդությամբ, վեր է հանում նաև հերոսների հոգեբանության հակասական բնույթը: Ամերիկայի սոցիալական խնդիրները յուրովի մեկնաբանությամբ արծարծել են Ժամանակի շատ գրողներ՝ Շ. Անդերսոնը, Ս. Լուիսը,

Ֆ. Ս. Ֆիցջերալդը, Է. Հեմինգուեյը, Ջ. Օ. Հարան, Ջ. Ափոյաթը, Ռ. Բրեդերիին, Ի. Շոուն, Բ. Մալամուդը, Ս. Մաքքարթին, Ջ. Կ. Օուսթը, Ս. Վիլսոնը, Հ. Միլլերը, Ս. Բելլուն: Կարող ենք ասել, որ Ջոն Զիվերի ստեղծագործություններում առավել լայնորեն և մանրագնի կերպով է ուսումնասիրվում միջին խավին պատկանող ամերիկացու կյանքը և կենսակերպի փոփոխությունը:

Ջոն Զիվերի խնդիրն է դառնում ներթափանցել հետպատերազմյան Ամերիկայի հասարակական հակասությունների էության մեջ, հասկանալ, թե ինչու է մարդկանց նյութական վիճակը զուգորդվում հոգևոր անկման հետ, իսկ գիտության և տեխնիկայի զարգացումը օտարացնում է մարդկանց: Նա իր պատմվածքներում գրում է, թե ինչպես է ամերիկացու նյութական կարգավիճակն ազդում իր ընտանեկան կյանքի վրա, ստեղծում լարվածություն ընտանիքի անդամների միջև, առաջացնում միմյանց նկատմամբ անտարբերություն: Թեև գրողը քննադատության է ենթարկում միջին խավին պատկանող մարդու ապրելակերպը, սակայն չի ծաղրում և չի նստեցնում կյանքի փակուղում հայտնված մարդուն ու նրա երազանքները: Հարկ է նշել, որ Զիվերի պատմվածքներում սոցիալական թեմատիկան ամերիկյան գրականագիտության կողմից ուշադրության չի արժանացել, ուստի ներկայացվող պատմվածքներում առավելապես սեփական դիտարկումներն են: Հարմարավետ կյանքով ապրելու մասին երազանքով են տարված «Ոսկու կճուճը», («The Pot of Gold», 1950) պատմվածքի հերոսները՝ Դալֆ և Լորա Վիթմորները: Նրանց բոլոր երազանքները, ապահով կյանքի ձգտումը կապված են լավ աշխատանք գտնելու հետ, սակայն հերոսների հոգեկան անհանգիստ վիճակը զուգորդվում է սպասումների անհաջող ավարտով: «Բաժանության եղանակը» («The Season of Divorce», 1950) պատմվածքում ամուսինը տարված է շատ գումար վաստակելու մոլուցքով և անուշադրության է մատնել կնոջը: Էթելի և ամուսնու հարաբերություններն արտացոլում են հասարակության սթրեսային վիճակը, թաքնված ներքին վրդովմունքը: Ընտանիքում ստեղծված իրավիճակը ներկայացնելով հեզմանքի միջոցով՝ Զիվերը նպատակ ունի արտաքուստ անվտանգ և ապահով միջավայրում անկայունության և անհույսության զգացողություն առաջացնել: «Հրեշալին ռադիոն» («The Enormous radio», 1947) պատմվածքում հերոսների՝ Ջիմ և Այրին Վեսքոթների միակ առանձնահատկությունը մյուս ընտանիքների համեմատությամբ դասական երաժշտություն ունկնդրելն էր: Մոցարտյան կվինտետից բացի՝ ռադիոյով լսվում են նաև հեռախոսազանգեր, իսկ հետո՝ ընտանեկան վեճեր, երեխաների լաց, կնոջ ճիչ: Ռադիոյի միջոցով Այրինը բացահատում է շենքի բնակիչների դժբախտությունները և տառապանքները: Պարզվում է, որ նրանք բոլորն էլ ունեն խնդիրներ, դրամի կարիք: Բրդթն Քենդելի «Զիվերի կողմից դիցաբանության կիրառումը «Հրեշավոր ռադիոն» պատմվածքում» («Cheever's Use of Mythology in «The Enormous Radio»») և Հենրիեթա Թեն Հարմսելի «Երիտասարդ Գուդման Բրաունն ու Հրեշավոր ռադիոն» («Young Goodman Brown and The Enormous Radio») հոդվածներում գրականագետները պատմվածքները դիտարկում են որպես չարի և անմեղության մասին առակ, սեփական անձի մուրհակումների նկատմամբ հիվանդագին ընկալում:¹¹

Հատկանշական է, որ միջին խավի ներկայացուցիչներին, նրանց կենսակերպը և խնդիրները ներկայացնելու համար գրողը օգտագործում է փոխաբերական

¹¹ Kendle Burton, Cheever's Use of Mythology in The Enormous Radio // Studies in Short Fiction 4. Newberry, S.C.: Newberry College, 1967, p. 262.

պատկերներ: Նա ստեղծում է դժվարին և խառնաշփոթ իրավիճակ, որտեղից դուրս գալու համար հերոսը երազում է լուծում գտնել: Պատմվածքների պլոմետային զարգացման մեջ երևակայական տարրեր կիրառելով՝ գրողը ստեղծում է հոգեբանական լարված իրավիճակներ:

«Կառավարիչը» («The Superintendent», 1953) պատմվածքի հերոս Չեսթեր Քուլիջը հպարտանում է իր զբաղեցրած պաշտոնով, քանի որ այն ամբողջությամբ համապատասխանում է իր հավակնություններին: Այնուամենայնիվ, նա չի կարող հաղթահարել անհաջողակի իր զգացումները: Չեսթերը նկատում է, որ ինքն իր պաշտոնում դեռ լիովին չի կայացել, և իր դիրքը չի արժանանում մարդկանց կողմից պատշաճ վերաբերմունքի: Զիվերի հերոսների՝ փողի նկատմամբ մոլուցքն, ի վերջո, ոչ մի լավ բանի չի հանգեցնում: Նրանք իրենց իսկ նյութական ձգտումների գոհն են դառնում: Զիվերը, մարդու կենսակերպի խնդրահարույց թեման ներկայացնելիս, օգտագործում է իր բացառիկ հումորը: Մարդկանց ներկայացնելով տարբեր փոխհարաբերություններում, ընտանեկան բարդ իրավիճակներում՝ նա արտահայտում է իր երգիծական վերաբերմունքը ոչ այնքան կերպարների, որքան այն իրավիճակների վերաբերյալ, որում մարդիկ հայտնվել են: Հերոսների թշվառությունն այն է, որ ջանասիրաբար ցանկանում են ստեղծել ապահով ու հարմարավետ կյանք բարոյական փխրուն հիմքի վրա:

1.2. ԱՆՁԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՂԻՐԸ ՋՈՆ ԶԻՎԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Սույն ենթագլխում մեր նպատակն է եղել ուսումնասիրել Ջոն Զիվերի հերոսի և արտաքին աշխարհի առնչությունների խնդիրը, ինչպես նաև այն ներքին հոգեբանական վիճակները, որոնք ի հայտ են գալիս ամերիկյան իրականության հետ բախվելիս:

Ջոն Զիվերի հերոսը աչքի է ընկնում բարդ մտածողությամբ և անհանգիստ ներաշխարհով: Նա միաժամանակ լավատես և հոռետես է կամ կասկածամիտ: Սա պայմանավորված է Զիվերի բառերով ասած, արտուրդային աշխարհում նրա գոյությամբ ու ժամանակակից իրականության հետ անքակտելի կապով: Այս կերպ գրողը փորձում է ցույց տալ հետպատերազմյան Ամերիկայի կյանքի անկայունության և անհուսալիության ազդեցությունը մարդու վրա:

Նորման Վինսենթ Փիլը «Դրական մտածողության ուժը» գրքում եզրակացնում է. «Սարսափելի է գիտակցել խղճուկ մարդկանց թիվը, որոնց կյանքը դժվարացել է և դարձել է թշվառ մի հիվանդության պատճառով, որը հասարակության մեջ կոչվում է անլիարժեքության բարդույթ: Սակայն սա տառապանքի պատճառ չէ: Երբ որոշակի քայլեր են ձեռնարկվում, այն կարելի է հաղթահարել»¹²: Զիվերի հերոսների հարաբերություններն արտաքին աշխարհի հետ ունեն երկակի բնույթ: Մի կողմից այն կարող է ճնշել, իսկ մյուս կողմից՝ հուսալիորեն պաշտպանել: Գորցնելով արտաքին հովանին՝ մարդը ապրում է վախի զգացողություն: Իրականության նկատմամբ վախի զգացողության հոգեբանությունը նրբորեն ներկայացվում է «Կամրջի հրեշտակը» («The angel of the bridge», 1961) պատմվածքում: Աշխույժ և կենսուրախ 78-ամյա կինը, երիտասարդ աղջկա հագուստ հագած, սահում է Ռոքֆելերի կենտրոնի սահաղաշտում: Պարզվում է, որ նա նախապաշարմունքային վախ ունի ինքնաթիռներով

¹² Norman Vinsent Peale, The power of positive thinking. New York: Prentice-Hall, 1954, p. 19.

թոշելուց: Ինքը՝ գլխավոր հերոսը, վախենում է կամուրջներից, որոնք նույնպես կարող են փլուզվել, և ամեն անգամ կամրջով անցնելիս նրա երևակայության մեջ պատկերվում է այդ աղետը: Հերոսի եղբայրը վերելակներից է վախենում, քանի որ տունը կարող է հանկարծակի փլուզվել: Չիվերը կարծես ուզում է ասել, որ աշխարհը գնում է դեպի անկում: Նա հարց է բարձրացնում, թե ինչու անավարտ քաղաքակրթությունում ու զարգացող աշխարհում մարդիկ այդքան հիասթափված են: Միգուցե մարդը դեռևս չի կարողանում հարմարվել կատարվող փոփոխություններին: Ինչպես «Ջուսթինայի մահը» («The death of Justina», 1964) պատմվածքում է ասվում՝ աշխարհը փոփոխվում է ավելի արագ, քան մարդու ընդունակությունները՝ հասկանալու և ըմբռնելու այդ փոփոխությունները¹³: Քլինթոն Բրեհանը նույն կարծիքն ունի: Ըստ նրա՝ Չիվերը մտահոգված է ժամանակակից փոփոխությունների բնույթով, նրա արագությամբ և երևույթների անհամապատասխանությամբ¹⁴:

Չիվերի հերոսներն ի վերջո դժվարին կացությունից դուրս են գալիս՝ մխիթարվելով անուրջների կամ տեսիլքների հայտնությամբ՝ որպես քառսային աշխարհի այլընտրանք: Երևակայությունը իրական խնդիրը լուծելու միջոց է դառնում: Չիվերն ուզում է կառուցել կամուրջ, որպեսզի միավորի կյանքի տարբեր կոտրվածքները: Ամերիկացիներն իրենց երկրի ճնշող մթնոլորտին ու շրջապատի մշտական հսկողությանը այլևս չկարողանալով դիմակայել մեկնում են Եվրոպա: Այսպիսի ինքնակամ տարագիրներ են «La bella lingua» պատմվածքի հերոս Վիլսոն Մթրիթերը և նրա իտալերենի ուսուցչուհի Քեյթ Դրեսսերը: Նրանք ապրում են Հռոմում, բայց ունեն անհարմարավետության զգացողություն: Հերոսներն ընդունակ չեն ընկալելու միջերկրածովյան մթնոլորտը, ազատ ապրելակերպը: Նրանք կորցնում են սեփական արմատների զգացողությունը, զգում անպաշտպան լինելն օտար միջավայրում, ուզում են վերադառնալ հայրենիք, բայց վախենում են այդ մասին խոստովանել անգամ իրենք իրենց: Նմանատիպ զգացողություն է ապրում նաև «Կինն առանց հայրենիքի» պատմվածքի հերոսուհին՝ Անն Թոնքինը: Տիրող քաղաքակրթության, մարդկային ավտոմատացված հարաբերությունների պայմաններում Չիվերի պատմվածքի հերոսը և արտաքին աշխարհը ներդաշնակ լինել չեն կարող: Այս աններդաշնակությունը շատ դեպքերում ծնում է անելանելիության զգացողություն: Իհարկե, այս ամենը վերջնական կլինեք, եթե անտեսեինք հեղինակի հեզնական վերաբերմունքը վատ երևույթների նկատմամբ, ինչպես նաև լավատեսության, որ չհասկացված և միայնակ մարդիկ մի օր կգտնեն ներդաշնակ վիճակ, իսկ աշխարհը կդառնա ուրիշ:

¹³ John Cheever, The Stories of John Cheever. New York: Alfred Knopf, 1978, p. 429.

¹⁴ Clinton S. Burhans, John Cheever and the Grave of Social Coherence // R. G. Collins, Critical essays on John Cheever. Boston, Massachusetts: G. K. Hall & Co, 1982, p. 116.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՀԱՏԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ ՋՈՆ ՉԻՎԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ 2.1. ԱՄԵՐԻԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ ՋՈՆ ՉԻՎԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Այս ենթագլուխը նվիրված է ընտանիք թեմային և առանձին մարդուն, նրա մենության դրսևորումներին, ներքին ձգտումների սահմաններին: Մեր նպատակն է եղել ուսումնասիրել ընտանեկան թեմատիկայի շոշափումը Ջոն Չիվերի պատմվածքներում, ամուսնու և կնոջ հարաբերությունները, մարդու ներքին մղումները, որոնք սահմանափակվում են արվարձանային միջավայրի ու կարծրատիպային վարքուկանոնի ազդեցությամբ, ինչպես նաև Չիվերի հերոսի ներքին բարդույթը պայմանավորված ոչ միայն արտաքին միջավայրի հետ հարաբերություններով, այլև ներքին, անձնային խնդիրներով: Ժամանակակից ընտանիքը, մարդու հասարակական դիրքը Չիվերի ուշադրության կենտրոնում են: Նրա պատմվածքներում միջին դասի ամերիկյան ընտանիքի անդամների միջև բխումն անխուսափելի է: Այն կարող է պայմանավորված լինել թե՛ հասարակական կարգուկանոնի հետ անհամաձայնությամբ, թե՛ սոցիալական և անձնական դրդապատճառներով: Այս աններդաշնակությունները հանգեցնում են մարդու մեկուսացմանը և օտարմանը ոչ միայն հասարակությունից, այլ նաև ընտանեկան միջավայրից:

«Ամառանոցային ամուսին» («The Country Husband», 1954) պատմվածքում Ջոն Չիվերը ներկայացնում է ընտանեկան հարաբերությունների ճգնաժամային պատկերը: Պատմվածքի հերոսին ընդունակ չեն լսել ընտանիքի անդամները, որի հետևանքը լինում է այն, երբ հերոսը սիրահարվում է երեխաների խնամակալուհուն: Ֆրենսիսը սովորական միջին խավի ներկայացուցիչ է, որը ապրում է զգացմունքային փոփոխություններ: Այն նոր լիցք է տալիս նրան, նոր շունչ հաղորդում, սակայն հասարակության կապանքներն այնքան ուժեղ են, որ տրորում են նոր հոգեվիճակը: «Չորրորդ խուճապ» («The Fourth Alarm», 1970) պատմվածքում Բերթան ևս ապրում է նոր զգացողություններ: Չիվերին ավելի շատ հետաքրքրում է ոչ թե մարդու անհատականությունը, այլ նրա դիրքն ընտանիքի և հասարակության բարոյական, հոգեբանական հարթությունում:

«Որդը խնձորում» («The Worm in the Apple», 1978) պատմվածքը Քրաչմանների ընտանիքի մասին է: Քրաչմանները կենսուրախ մարդիկ են, ապրում են գոհունակությամբ, նրանց վարքագծում չի նկատվում դժգոհության նշույլ: Հեղինակին հետաքրքրում է հենց այս հանգամանքը, և նա կասկածամտորեն ամեն կերպ ձգտում է ընտանիքում գտնել «որդ»: Որդն այստեղ փոխաբերական իմաստով է գործածում՝ նկատի ունենալով ընտանեկան գոտության նշույլ կամ մեղավորություն:

Չիվերի համոզմամբ՝ երջանկությունը միշտ ծնում է կասկած, քանի որ համարվում է ինչ-որ անսովոր ու արտասովոր երևույթ: Գրողի ուշադրության կենտրոնում Քրաչմանների ընտանիքի անդամներն են, նրանց խառնվածքները և բոլոր այն ազդեցությունները, որոնք ձևավորում են նրանց կյանքն ու որոշումները: Չիվերը փորձում է թվարկել այն բոլոր հնարավոր ձախողումները և դժվարությունները, որոնք կարող էին պատահել Քրաչմանների կյանքում: Չիվերի այս վերաբերմունքը զարմանալի չէ, քանի որ նրա պատմվածքների մեծ մասում ոչ

ներդաշնակ ընտանեկան պատմություններ են: Այդուհանդերձ, մեղադրանքներից և հերթական արդարացումներից հետո բացահայտում ենք, որ ընտանիքում այդ «որդը» չկա: Ի տարբերություն մյուս ընտանիքների՝ Քրաչմանների դեպքում Չիվերը գողության, հարբեցողության և դավաճանության դեպք չի բացահայտում և, որևէ մեղավորություն չգտնելով, ծաղրանքով նշում է մի թերություն, մի բան, որը ի սկզբանե էր փնտրում: Քրաչմանները ձանձրալի են:

Հատկանշական է, որ Չիվերի պատմվածքների հերոսները հիմնականում տղամարդիկ են: Կանայք հանդես են գալիս մոր և կնոջ դերում: Նրանց դերակատարությունը սահմանափակվում է ամուսնու հետ փոխհարաբերությամբ և նրա վրա ունեցած ազդեցությամբ: Չիվերը նկարագրում է տղամարդու և կնոջ միջև հակասությունները, ժամանակի ընթացքում ամուսնության նշանակության փոփոխությունը: Հասարակական և ընտանեկան հարաբերություններում մարդկանց միջև հաղորդակցման պակասը, արտաքին աշխարհից հիասթափությունը ավելի են սրում լարվածությունը: Սա է պատճառը, որ Չիվերի պատմվածքի հերոսները փորձում են գտնել հանգստություն ներքին դատարկությունը լցնելու համար: Գրականագետ Ալֆրեդ Քեյզլը գրում է, որ միայնակության զգացողությունն օդի պես անհրաժեշտ էր Չիվերի հերոսներին, քանի որ նրանք իրենց աշխատանքում ձեռքբերումների զգացումներ չունեն: Նրանք երբեք չեն բախվում կամ պայքարում հասարակության հետ: Ամբողջ հակամարտությունը կենտրոնացած է մարդու գլխում: Մարդիկ պարզապես անհետանում են, ինչպես կիեռանան սովորական երեկույթից¹⁵: Չիվերն անդրադարձել է նաև կնոջ երկակի դիրքին հասարակության մեջ: Այն առավել ցայտուն արտահայտվել է այնպիսի պատմվածքներում, ինչպիսիք են «Երաժշտության ուսուցչուհին» («The Music teacher», 1959), «Ուսյալ ամերիկուհին» («An Educated American Woman», 1963): Ամերիկյան ժամանակակից հասարակության մեջ կնոջ մոտիվը հնչում է նաև «Օվկիանոս» («The ocean», 1964) պատմվածքում: Իր պատմվածքներում սովորական միջին խավի ամերիկյան ընտանիքի ներքին, անձնային հարաբերություններն ուսումնասիրելիս Չիվերի ուշադրության կենտրոնում առավելապես անհատն է, նրա բարոյական և հոգեբանական նկարագիրը, դրսևորած վարքը կյանքի այս կամ այն իրավիճակներում: Չիվերին հերոսների բանական և գիտակցական կողմը այնքան չի հետաքրքրում, որքան նրանց հոգեվիճակը, զգացմունքային փոփոխությունները, հաջողության հասնելու ճանապարհին սայթաքումները և վայրիվերումները: Հետպատերազմյան շրջանում, բացի Ջոն Չիվերից, ամերիկյան ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների թեմային անդրադարձել են նաև այլ գրողներ՝ Ջ. Դ. Սելինջերը, Ջ. Ափոլայթը, Մ. Մաքքարթին, Ջ. Օուլսթը, Ս. Բելլուն և այլք: Ժամանակակից ամերիկյան հասարակության անտարբերությունը, վստահության բացակայությունը գոյություն ունի շատ ու շատ ամերիկյան ընտանիքներում: Չիվերի հերոսները միայնակ են ոչ միայն ընտանեկան, այլ նաև տանից դուրս՝ հասարակական և սոցիալական հարաբերություններում:

¹⁵ Alfred Kazin, O Hara, Cheever and Apdike // R. G. Collins, Critical essays on John Cheever. Boston, Massachusetts: G. K. Hall & Co, 1982, p. 124.

2.2 ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՋՈՆ ՉԻՎԵՐԻ ՊԱՏՄԱՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ջոն Չիվերի արվարձանում մարդկանց համախմբված լինելը թվացյալ է: Այստեղ մարդն իրեն լիարժեք զգալ չի կարողանում, քանի որ արվարձանային աղճատված մթնոլորտում նրա անհատականությունը կարծես կորչում է: Այս թեմայի շրջանակում մեր ուշադրության կենտրոնում Չիվերի «Լոդորդը» և «Օ, երիտասարդություն և հմայք» պատմվածքներն են: «Լոդորդը» պատմվածքի բովանդակությունն արտաքուստ պարզ է, միջին խավին պատկանող ամերիկացու՝ Նեդի Մերիլի մեկօրյա ջրային շրջագայությունը: Հեղինակը Նեդին հնարավորություն է տալիս գտնելու ճշմարտությունը իր որոնումների մեջ, իսկ տարբեր մարդկանց հետ հանդիպումները պատահական չեն: Այդ մարդիկ ոչ իրականից իրականություն Նեդի վերադարձի և իր որոնումներում ճշմարտությունը գտնելու միջոցն են: Լողավազանից լողավազան անցնելով՝ նա գիտակցում է, որ իր շրջապատում կամ իր հետ ինչ-որ մի բան այն չէ: Նեդին հանդիպած մարդիկ որոշակի ազդեցություն են ունենում նրա տրամադրության վրա և ստիպում խորհել, թե ինչն այն չէ, սակայն Նեդը խոր մտածումների ունակ չէ, նույնիսկ հարցեր տալու կամ պատասխաններ ստանալու շնորհք չունի, և թվում է, թե նա բավարարվում է իր մտածելու անկարողությամբ: Հետաքրքիր է, որ յուրաքանչյուր վատ նորություն նրան ստիպում է խմել, սա թերևս խոսում է այն մասին, որ հերոսն անտարբեր չէ ալկոհոլի նկատմամբ, իսկ ոգելից խմիչքի օգտագործումը հանգեցնում է ոչ սթափ վիճակի, հաճախ նաև հիշողության կորստի: Գրականագետ Ջորջ Հանթը մեկնաբանում է Նեդի մոռացկոտությունը որպես էքզիստենցիալ երևույթ, որը զուգորդվում է ֆիզիկական ծերացման և ֆիզիոլոգիական ռեպրեսիայի հետ¹⁶: Ջուզահետ անցկացնելով Նեդի անախորժ իրավիճակը Չիվերի կյանքի հետ՝ Դոնալդսոնը պնդում է, որ Նեդի գինեմոլությունը հանգեցրեց նրա կործանմանը¹⁷:

Պատմվածքում արծարծելով արվարձանաբնակների հոգևոր անկման թեման՝ Չիվերն, այնուամենայնիվ, Նեդին համարում է ոչ հետևողական փնտրող, քանի որ նա այդպես էլ չի կարողանում հասկանալ կյանքի կարևոր ու իրական արժեքները և, այդպիսով, վերափոխել ինքն իրեն: «Օ, երիտասարդություն և հմայք» («O Youth and Beauty», 1953) պատմվածքում Ջոն Չիվերը ներկայացնում է մեկ ուրիշ արվարձանաբնակի ներքին ճգնաժամը: Գլխավոր հերոս Քեշ Բենթլին միջին տարիքի տղամարդ է: Նա հպարտանում է սպորտային մարզիկի իր երբեմնի համբավով, կնոջ Լուիզայի և երկու երեխաների հետ ապրում են Ալեվայվո Լեյնում: Բենթլիները Շեյդի Հիլի չափանիշներով երջանիկ գույգ էին, սակայն ունեին իրենց վայրիվերումները: Իրենց առօրյան հետաքրքիր դարձնելու համար նրանք հաճախակի մասնակցում են ընկերների կազմակերպած հավաքույթներին: Այդ երեկոներից հետո Քեշը, սովորության համաձայն, վերադասավորում է սենյակի կահույքը և սկսում թոչկոտել դրանց վրայով՝ այդ կերպ փորձելով վերադարձնել անցյալի իր փառքը: Քեշ Բենթլիի դժվարին կացությունը ոչ միայն ուժը և երիտասարդությունը կորցնելու, այլև համայնքում իր ինքնության յուրահատուկ ընկալումը կորցնելու հետևանքն է: Քեշը տանը վազքի ևս մեկ փորձ է անում այն պահին, երբ կինը փորձում է կրակել: Նա բարկացած նախատում է կնոջը ձգանը քաշել՝ հաշվի չառնելով կնոջ անփորձ լինելը: Լ. Վոլդելանդի բնորոշմամբ՝ սա մարդասիրական ցանկություն է, կարելի է ասել,

¹⁶ George Hunt, John Cheever: The Hobgoblin Company of Love. Grand Rapids: Eerdmans, 1983, p. 282.

¹⁷ Scott Donaldson, John Cheever: A Biography. New York: Random House, 1988, p. 211.

դուրս հանել վիրավոր գազանին տառապանքների միջից¹⁸։ Քեշը չի կարող տեսնել այլ գոհունակություն իր կյանքում։

Նա վիշտ է ապրում, քանի որ կորցրել է այն ունակությունը, որն իրեն հաջողակ էր դարձրել արվարձանում, հետևաբար, կորցրել է նաև համայնքում ունեցած իր դիրքը։ Եթե այլ պատմվածքների հերոսներն ապավինում են երազանքներին կամ ոչ հավանական իրավիճակներին ներքին բարդությից դուրս գալու համար, Քեշի սպանությունը փախուստ է իրականությունից։ Քեշի և Նեդի միջև եղած նմանություններ կարող ենք տեսնել։ Նա նույնպես Նեդի Մերիլի նման ուզում է պահպանել երիտասարդությունը և երբեմնի ուժը՝ թեկուզ ինքն իրեն ապացուցելու համար։ Եթե Նեդը ծրագրել է լողալ հարևանների լողավազանների միջով, Քեշը երեկոյթների ժամանակ ցատկում է կահույքի վրայով։ Արվարձանում ինքնագնահատականը, սոցիալական դիրքը չկորցնելը կարծես ներքին բարդություններ են, որոնցով տառապում են Չիվերի հերոսները։ Նրանք ամեն կերպ փորձում են պահպանել իրենց, կարելի է ասել, արվարձանային ինքնությունը։

Երկու հերոսներն էլ, չկարողանալով հաղթահարել ներքին ճգնաժամը, արվարձանից դուրս են հայտնվում՝ հոգեպես կամ ֆիզիկապես։ Եթե Նեդի վախճանը հոգեկան մահն է, Քեշի համար Չիվերի լուծումը ֆիզիկական չգոյությունն է։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐ

ԶՈՆ ԶԻՎԵՐԸ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ ԱՐՎԱՐԶԱՆԸ

3.1. ԱՄԵՐԻԿԱՆ ԱՐՎԱՐԶԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԶՈՆ ԶԻՎԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ատենախոսության սույն ենթագլխում մեր նպատակն է եղել ուսումնասիրել Ջոն Չիվերի պատմվածքներում ամերիկյան արվարձանի էությունը։ Գրողն ի՞նչ խնդիրներ և անհամաձայնություններ է տեսնում նրա ներսում, ի՞նչ ապրելակերպ ունի մարդն այստեղ, և ինչու է արվարձանային արտաքուստ երազելի միջավայրում Չիվերի հերոսն իրեն գգում ոչ ներդաշնակ։

Մինքլեր Լուիսի, Մլոան Վիլսոնի ու Ջոն Ափդայքի նման Ջոն Չիվերն իր ստեղծագործություններում մեծ ուշադրություն է դարձրել ամերիկյան արվարձանին և նրա ներսում ապրող մարդուն։ Եթե Ջոն Ափդայքի արվարձանը՝ Թարբոքսը, առանձնացված չէ աշխարհի արտաքին իրականությունից, իսկ բնակիչների կյանքը կախված է կամ ազդվում է հասարակական փոփոխություններից և այլ նշանակալից իրադարձություններից, ապա Չիվերի արվարձանը մեկուսացած է։ Նրա Շեյդի շիլի արվարձանում չենք տեսնում քաղաքական քննարկումների կամ ազգային իրադարձության որևէ օրինակ։

Ջոն Չիվերի արվարձանի ներքին լարվածությունն ու բարդությունը պայմանավորված է համայնքի առանձին անդամների շփումով։ Նրանց հիմնական խնդիրն է դառնում հավասարակշռել արվարձանային կյանքն արագ փոփոխվող ամերիկյան հասարակության հետ։

Չիվերը ներկայացնում է արվարձանի ձևական բնույթը և թույլ տալիս ներթափանցել նրա արտաքուստ փայլուն մակերևույթից ներքև, նկատել սկզբնապես թաքնված արատները։ Այս ճանապարհով Չիվերը բացահայտում է արվարձանային իդեալի պատրանքային բնույթը։ Այդ թերություններից մեկը բնակիչների՝ խմիչքի

¹⁸ Lynne Waldeland, John Cheever. Boston: G.K. Hall & Co, 1979, p. 70.

նկատմամբ հակվածությունն է: Չոսթերի հերոսներից շատերն ապրում են երկակի կյանքով: Նրանք կա՛մ օրինապահ քաղաքացիներ են, կա՛մ հարբեցողներ ինչպես «Խմիչքի տխուր հետևանքները» («The Sorrows of Gin», 1953) պատմվածքում է: Պատմվածքներում ակոհողի օգտագործումը ներկայացվում է որպես առաջնային թերություն արվարձանային իդեալի համար, ոչ միայն այն պատճառով, որ հիմնականում ընտանեկան գոտության հիմք է դառնում, այլ նաև պուրիտանական սկզբունքները դեմ են դրան:

Պատմվածքում Չոսթերը ներկայացնում է դեռատի աղջկա՝ Էմմի Լուրթոնի փորձությունները: Էմմին արվարձանի սոցիալական կյանքի մաս չի կազմում: Նա երկրորդական դեր ունի իր ծնողների խնջույքների ժամանակ: Չոսթերը ներկայացնում է արվարձանային իրականության երեք մտահոգիչ հարցերը: Առաջինը, թե ինչն է դրդում Էմմիին հոր խմիչքը թափել լվացարանում, երկրորդը՝ նրա որոշումը Շելլի Հիլից հեռանալ դեպի քաղաք, և վերջինը պատմվածքի ավարտն է, երբ հայրը մեկնաբանում է տունը լքելը և մեկնելու անիմաստությունը: «Վերամիավորում» («Reunion», 1962) պատմվածքում տեսնում ենք, թե ինչպես է ակոհողը փչացնում հոր և որդու հարաբերությունները: Հայրն առաջարկում է գնալ ռեստորան և միասին ժամանակ անցկացնել: Այստեղ Չարլիի համար պարզ է դառնում, թե ինչպիսին է իրականում իր հայրը, որքան կոպիտ նա կարող է լինել մարդկանց հետ:

Չոսթերն արվարձանում այլ արատավոր երևույթներ ևս տեսնում է, ինչպես, օրինակ, մարդկանց բնական հակվածությունը ասեկոսեների նկատմամբ: «Պարզապես ասա ինձ, ով էր նա» («Just Tell Me Who It Was», 1955) պատմվածքում աղմկահարույց պարահանդեսը տարբեր շշուկների տեղիք է տալիս: Իրավիճակն ավելի է սրվում հարևանների խոսակցություններից, թե ինչ տեղի ունեցավ, երբ Մարիան լքեց պարահանդեսը: «Դեղամիջոցը» («The Cure», 1952) պատմվածքի գլխավոր հերոսը մեղադրում է իր հարևանին, որը գիշերը թափառում էր իր տան շրջակայքում և նայում պատուհանից ներս, չնայած չկան կոնկրետ ապացույցներ, որը կհանգեցներ հերոսին կասկածների ճշմարտացիությանը: «Ամառային ֆերմեր» («Summer Farmer», 1948) պատմվածքի հերոս Փոլ Հոլիսը մեղադրում է հարևանին, քանի որ նա իր հողատարածքում թույն է դրել և սպանել ճագարներին: Հետո, ի վերջո, պարզ է դառնում, որ Հոլիսի կինն է թողել թույնը հողատարածքում: Բամբասանքը և կեղծավորությունը պատճառ են դառնում արվարձանի բնակիչների փոխհարաբերությունների ոչ ազնիվ լինելուն և հաճախ հանգեցնում այդ հարաբերությունների անորոշությանը, անվստահությանը և կասկածամտությանը: Դրանք էլ իրենց հերթին բերում են տարբեր զգացմունքային վիճակներ՝ հոգեկան խռովք, ճնշվածություն, միայնության զգացողություն: Բոլոր այս գործողությունները բխում են ծայրամասային հարաբերությունների արհեստական բնույթից: Արվարձանում մարդիկ ձևացնում են, որ սիրում են իրար, ու ամեն ինչ հիանալի է: Մարդկային անհամաձայնությունների ու տարակարծությունների օրինակ տեսնում ենք «Մարսի Ֆլինթի անախորժությունները» («The Trouble Of Marcie Flint», 1957) պատմվածքում: Պարզ է դառնում, որ Շելլի Հիլի հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ավարձանը չունի հանրային գրադարան, և միգուցե այս պատճառով է, որ համայնքի ներկայացուցիչները շատ դեպքերում խոր մտածելու ունակությունից հեռու են, քանի որ չեն ընթերցում: Մարք Բարեթը ներկայացվում է որպես միջին խավի պահպանողական, որը կասկածով է վերաբերվում ինտելեկտուալիզմին: Սա այն է, ինչի մասին խոսում է Ուոլթ Ուիթմանը «Ժողովրդավարական հեռանկարներ» («Democratic Vistas», 1871) գրքում. «Մի տեսակ բնական

նողկանք գրականության և կապիտալիստական կյանքի միջև»¹⁹։ Արվարձանում ինտելեկտուալիզմը ենթադրում է սպառնալիք ստատուս քվոյին։ Այն պահանջում է անհատական մտածողություն, որը կարող է մարտահրավեր նետել ծայրամասային միջին դասի գաղափարաբանությանը։

Վտանգը, որը գալիս է համայնքի ներկայացուցչից, կարծես ավելին է, քան անձնական ճգնաժամը։ Չիվերն իր արվարձանում տեսնում է նաև մարդու մենության և չհասկացված լինելու խնդիր։ Այս թեման շոշափվում է Չիվերի գրեթե բոլոր պատմվածքներում։ Չիվերի հերոսը միայնակ է, որովհետև կամ հասկացված չէ հարազատ մարդկանց կողմից, կամ իր գաղափարների տարբերությունը նրան առանձնացնում է մյուսներից։ Արվարձանի բնակիչները հարևանական հարաբերություններում պետք է կարողանան բարեհաճ գտնվել միմյանց նկատմամբ, հակառակ դեպքում կհայտնվեն այդ հարաբերություններից դուրս։ Համայնքն առանձնացնում է իր սահմանած օրենքները խախտողին։ Օրինակ՝ Ուիլ Պումֆին հարևանները չեն հրավիրում իրենց տուն, որովհետև նա ներքին խնդիրներ ունի, որը կարող է իր հերթին ազդեցություն ունենալ իրենց վրա։ Ջոնի Հեյքը բաց է թողնում կիրակնօրյա հանդիպումը, որի պատճառով հետագայում իր ընտանիքը չի հրավիրվում առֆթոլի խաղին։ Թեև Չիվերի պատմվածքի հերոսը չի գիտակցում իր արարքի հետևանքները, հասարակությունը կարողանում է կռահել օրինազանցին։ Չիվերի հերոսներին տեսնում ենք աշխատանքի մեջ, անդադար տեղափոխվելուց հոգնած, ավոհուլի նկատմամբ հակվածությամբ, ունեն պարտքեր և կասկածամտությամբ են վերաբերվում իրենց կանանց հավատարմությանը։ Անկախ նրանից, թե որքան ցավալի են նրանց տագնապները կամ անհանգստությունները, գրեթե բոլորն էլ ձևացնում են, որ ամեն ինչ հիմնալի է։ Չիվերի համար արվարձանային երազի և անձնական երջանկության համաձայնեցումը դժվար է պատկերացնել, և պետք է գտնել հավասարակշռություն դրանց միջև, որը թույլ է տալիս այդ երազի իրականացումը, սակայն հեռու չէ փոխակերպվել մոլավանքի։

3.2. ՋՈՆ ՉԻՎԵՐԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՎԱՐՔՆ ՈՒ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Այս ենթագլխում մեր նպատակն է եղել ուսումնասիրել նաև Չիվերի հերոսի վարքագիծը և մտածողությունը կյանքի այս կամ այն իրավիճակում հայտնվելիս։ Ո՞րն է մարդու, այսպես ասած, արվարձանային կանոններից դուրս, ոչ սովորական վարվելաձևի պատճառը։ Սա, թվում է, սովորական հարց է, սակայն խնդիրն այն է, որ արվարձանային գոյության կերպն այնքան անփոփոխ և հիմնային է դարձել, որ մարդու մտածողության սահմաններն արվարձանի վարքաբարքի սահմաններից դուրս չի կարող անցնել։ Չիվերի համար կարևոր է ներկայացնել ոչ թե իր հերոսների գործողությունները, այլ այդ գործողությունների պատճառները, երևույթների «ինչու»-ն։

Ամերիկյան արվարձանում մարդիկ իրարից առանձնացած են, թեև նրանք շատ հաճախ հավաքույթներ են կազմակերպում, կոկտեյլ վայելում, բայց սա միայն որպես ժամանց։ Կյանքի դժվար պահերին նրանք իրար օգնելու, ձեռք մեկնելու կամ միմյանց հասկանալու ունակությունից զուրկ են։ Մեր կարծիքով՝ Ջ. Չիվերն իր պատմվածքներ-

¹⁹ Walt Whitman of Mickle Street: A Centennial Collection, (Ed. by Geoffrey M. Sill), Knoxville: The University of Tennessee Press, 1994, p.98.

րում նաև այն միտքն է զարգացնում, որ արվարձանային գեղեցկության և բնության հրաշքի մեջ մարդիկ, ցավոք, չեն կարող միասին երջանիկ ապրել:

Արտաքուստ ներդաշնակ, բայց ներքին վայրիվերումներով լի արվարձանում հակադրությունները բացառություն չեն: Այս առումով մարդկային հոգեբանության և մտածողության երկու հակասական կողմերի լավագույն օրինակը թերևս Չիվերի «Շեյդի Հիլի կողոպտիչը» («The Housebreaker of Shady Hill», 1958) պատմվածքն է: Գլխավոր հերոս Ջոնի Հեյքը որոշում է սեփական բիզնեսը ձեռնարկել այն ժամանակ, երբ պլաստմասերի գործարանի տերը նրան հեռացնում է աշխատանքից: Հայտնվելով գործազուրկի կարգավիճակում և մտավախություն ունենալով կորցնել Շեյդի Հիլի արվարձանում իր հարմարավետ ապրելակերպը՝ նա դուրս է գալիս ինքնակառավարումից: Սրա ազդեցությամբ էլ սկսվում է նրա կյանքի հետագա բարդ ընթացքը: Ջոնի կինը և երեխաները զգում են նրա հիասթափությունը, որը ներգործուն դեր է ունենում տան մթնոլորտի լարվածության վրա: Նա մտավախություն ունի կնոջը պատմել Վարբուրտոններից գումար գողանալու մասին, քանի որ կինը կարող է մտածել, որ իր հետ ինչ-որ բան այն չէ: Փաստորեն ստացվում է այնպես, որ արվարձանում իր ապրելակերպը պահպանելու համար Ջոնի Հեյքը պետք է ունենա գումար, հակառակ դեպքում՝ նա դուրս է մնում համայնքի միասնությունից: Թեև գողությունից հետո նրա ֆինանսական հարցերը որոշ չափով կարգավորվում են, այնուամենայնիվ, կյանքը հաջորդ շաբաթների ընթացքում չի փոխվում: Ջոնիին սկսում է տանջել սեփական մեղքի զգացողությունը:

Դիտարկելով Ջոնի Հեյքի գործողությունները՝ կարող ենք մտածել նաև, որ վերջինս հոգեկան խնդիրներ ունի: Ակնհայտ է, որ նա պայքարի է դուրս գալիս այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է ընտանեկան հարաբերություններին: Հեյքը գողանում է, որպեսզի կարողանա ապրել հանցագործություններից զերծ արվարձանում, իսկ Ուիլ Պուլմի խանդի մոլեգնությունները նրա ներքին պայքարի ուղղակի նախանշաններն են: Ըստ գրականագետ Ռոբերտ Մ. Սլեյքիի՝ արվարձանաբնակները, ինչպիսիք են՝ Չիվերի հերոսներ Ֆրենսիս Ուիդը և Ջոնի Հեյքը, մակերեսից ընկել են այն անդունդի մեջ, որի վրա անհիմն կերպով կերտվել է կյանքը...: Այս անդունդը ծովածոց է, որն իրարից բաժանում է երևակայական աշխարհը, որով ապրում են ամերիկացիները, և իրական աշխարհը (իրականությունը), որում նրանք ապրում են²⁰:

Չիվերը, հերոսների ներքին փոթորկումներն ուսումնասիրելով, այն միտքն է արտահայտում, որ մարդկային պարզ հոգատարությունը կարող է օգնել մարդուն չկորցնել ներքին ջերմությունը: Խուճապի և միայնակության զգացողությունները, գիտակցության վիճակներն իրար միակցված են, իսկ միայնակ մարդն ավելի զգայուն և խոցելի է: Այս իրավիճակը նաև մարդու և ժամանակակից հասարակության միջև հակադրության արտահայտումն է: Հատկանշական է, որ արվարձանային կարգուկանոնը չխաթարելու հանգամանքը մարդու բարոյական գիտակցության մեջ է: Օրինակ՝ «Օրինակ՝ Հինգ-քառասուն-ութը» («The Five-Forty-Eight», 1954) պատմվածքի հերոսուհին որոշում է չսպանել, այն մարդուն, ով ցավ է պատճառել իրեն: Նա մեզ չի ներկայացնում հերոսի՝ Բլեյքի ընտանեկան կյանքը: Փոխարենը պատմում է մի վրեժխնդրության մասին, թե ինչ է տեղի ունենում հերոսի և նրա նախկին գործավարուհու՝ Դենթի միջև: Բլեյքը ազատում է Դենթին աշխատանքից՝ նրա հետ նախկին

²⁰ Robert Slabey, John Cheever: The Swimming of America // R.G. Collins, Critical Essays on John Cheever, Boston, Ma: GK Hall & Co., 1982, p. 182.

կապի բացահայտումից և հետագա բարդություններից խուսափելու համար: Հերոսը մոռացել է իր անցյալը, նույնիսկ չի հիշում իր նախկին գործավարուհու անունը, սակայն պարզ է դառնում, որ վերջինս չի մոռացել նրան: Ինչպես գրականագետ Փաթրիք Մինորն է գրում. «Թեև պատմությունը վրեժխնդրության մասին է, սակայն, ըստ էության, այն Բլեյքի կերպարի ուսումնասիրությունն է, որպես անհոգի ավտոմատի, Զիվերի՝ ամենից նողկալի մարդաստացի, բացառությամբ «Վապշոտյան խայտառակություն» վեպի հերոս Քամերոնի»²¹: Բլեյքը չունի խղճմտանքի զգացողություն ուրիշների, հատկապես խոցված և վիրավոր մարդկանց համար, ինչպիսին Դենթն է: Ինչպես Հեյքը, Բլեյքը նույնպես երկակի բնույթ ունի. վատը թաքնված է նրանից և հեշտությամբ կարող է ի հայտ գալ ինչ-որ խնդրի կամ իրավիճակի առկայության դեպքում: Եթե Հեյքին բնորոշ է ինքնագնումը, սեփական արարքների պատճառները վերլուծելու կարողությունը, Բլեյքը, թվում է, զուրկ է վերլուծելու ունակությունից, անգամ ներքին խիզախությունից առճակատվելու սեփական արարքների հետևանքներին:

Նրա համար առաջնային խնդիրը արվարձանի մյուս բնակիչների մոտ պատշաճությունը չկորցնելն է: Հերոսների վարքագիծը մի կողմից կարող է դիտվել արտոդային, որովհետև նրանք մերժում են ընդունել իրենց ենթակա դրությունը մի համակարգի նկատմամբ, որն արդեն ցույց է տվել իր անկայունությունը և անորոշությունը: Հերոսներին նկարագրելիս, ըստ էության, Զիվերն այն միտքն է արտահայտում, որ վատ արարքը գիտակցելը դեռևս չի նշանակում փոխել ինքզինքդ. մարդը մնում է միննույն մտածողության սահմաններում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով Ջոն Զիվերի փոքր արձակի հիմնախնդիրները՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Հետպատերազմյան շրջանում ամերիկյան պատմվածքագրության մեջ միջին խավի ամերիկացու կյանքը ներկայացվում է իր հակադրությունների և բարդությունների ամբողջությամբ և բազմաբովանդակությամբ: Մոցիալական կարգավիճակից առաջացած հակասություններն առկա են ոչ միայն արտաքին աշխարհի հետ մարդու հարաբերություններում, այլև նրա ներաշխարհում: Զիվերի հերոսները թեև ստեղծում են արտաքուստ խաղաղ և ապահով կյանքի պատրանք, տպավորություն, հոգեպես և հուզականորեն մտահոգ են:

2. Զիվերը փորձում է ներթափանցել հետպատերազմյան Ամերիկայի հասարակական հակադրությունների էության մեջ, հասկանալ, թե ինչու է մարդկանց նյութական վիճակը զուգորդվում հոգևոր անկման հետ, իսկ գիտության և տեխնիկայի զարգացումը՝ օտարացնում մարդկանց: Զիվերին մտահոգում են մարդու հոգևոր դատարկությունը, գաղափարազրկությունը, աննպատակ գոյությունը, նրա բարոյական անկումը, ժամանակակից հասարակության մասնատված լինելը:

3. Ջոն Զիվերի արվարձանում յուրաքանչյուր բնակիչ ձգտում է հարստություն կուտակել: Մարդիկ իրարից մեկուսացած են, մենակության զգացումը չի լքում նրանց: Հիմնական պատճառն այն է, որ նրանք ապրում են կեղծ արժեքների աշխարհում և

²¹ Patrick Meanor, Comprehensive research and study guide Bloom's major short story writers: John Cheever. (Ed. Harold Bloom). New York NY: Chelsea House, 2004, p. 67.

դրանից դուրս գալու ելք չունեն կամ դժվարանում են գտնել: Չիվերը հիմնականում պատկերում է միջին խավի տղամարդուն, որը ֆինանսական խնդիրների պատճառով լուրջ տարաձայնություններ ունի իր ընտանիքի անդամների՝ կնոջ, երեխաների և ծնողների հետ: Այս պատճառով էլ գրկված է ընտանեկան ջերմությունից, որն էլ ավելի խորացնում է նրա հոգեկան անկումը:

4. Ջոն Չիվերն իր պատմվածքներում ընդգծում է նաև ժամանակակից ամերիկացու բարոյահոգեբանության և տեխնոլոգիական զարգացման միջև անհամապատասխանությունը: Պարզվում է՝ մարդը վախենում է ներկայի քաղաքակրթությունից, որն անհուսալիության և անկայունության զգացողություն է առաջացնում: Հաղորդակցվելու և ներքին հույզերն արտահայտելու վախը ավելի է խորացնում նրա սթրեսային վիճակը: Չիվերի հերոսը, բախվելով քառսային իրականությանը, դժվարին կացությունից դուրս է գալիս՝ վսիթարավելով անուրջների կամ տեսիլքների հայտնությամբ՝ որպես քառսային աշխարհի այլընտրանք:

5. Ջոն Չիվերի պատմվածքների հերոսներն ունեն ներքին անհամաձայնություններ ոչ միայն ընտանիքի անդամների հետ, այլ նաև դրսի աշխարհում: Պարզվում է, որ մարդը խնդիրներ ունի ոչ միայն նշված միջավայրերում, այլև ինքն իր հետ, ուստի շարունակ փնտրտուքների մեջ է: Ի հայտ են գալիս այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ մեությունը, հասարակությունից օտարումը, սիրո պակասը, ներքին խառնաշփոթ վիճակը: Չիվերն ուզում է ասել, որ անձը և ընտանիքը փոխկապակցված երևույթներ են: Առանց ընտանեկան ամբողջականության և լիարժեքության մարդը չի կարող ամբողջական ու լիարժեք լինել:

6. Արվարձանը և Չիվերի հերոսը անմիջականորեն փոխկապակցված են: Մարդն ազատ չէ արվարձանային օրինաչափություններից, ուստի ինքնուրույն գործել չի կարող, իսկ եթե հանկարծ փորձում է անկախանալ, բախվում է խոչընդոտների: Չնայած արվարձանային անհամաձայնություններին՝ Չիվերի պատմվածքների ավարտը լավատեսական է: Նրա հերոսները ներքին ճգնաժամը կամ կոնֆլիկտը հաղթահարելուց հետո ի վերջո որոշում են վերադառնալ արվարձանի թվացյալ ապահովությանը և այստեղ գտնել խաղաղություն:

ԱՏԵՆԱՌՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. «Անձի խորհրդանշական վերձանումը Ջոն Չիվերի «Լոդոբորը» պատմվածքում» //«Կանթեղ», Երևան, 2014, էջ 3-10:

2. «Ամերիկայի սոցիալական կյանքի խնդիրների դրսևորումը Չիվերի պատմվածքներում» //«ԱԿՈՒՆԲ» ԵՊՀ/ԻՄ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 133-137:

3. «Ջոն Չիվերի պատմվածքների հերոսների ներքին բարդույթն ընտանեկան և հասարակական հարաբերություններում»//«Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2015, էջ 3-15:

4. «Ջոն Չիվերի հերոսների վարքն ու մտածողության սահմանները»//«Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2016, էջ 12-21:

5. «Անձի և արտաքին աշխարհի հարաբերակցության խնդիրը Ջոն Չիվերի պատմվածքներում»// «Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2016, էջ 23-33:

6. «Ամերիկյան արվարձանի խնդիրը Ջոն Զիվերի պատմվածքներում»
//«Լրաբեր հասարակական գիտությունների», 3(648), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատարակչություն, 2016, էջ 208-214:

МАРИНЕ АРАМАЙСОВНА АНДРАСЯН
«Основные проблемы рассказов Джона Чивера»

Резюме

Данная диссертационная работа посвящена основным проблемам, изложенным в коротких рассказах американского писателя Джона Уильямса Чивера (1912-1984).

Основной целью работы является изучение проблем, которые возникли в результате социальных противоречий в американском обществе. В коротких рассказах Чивера, в частности, рассматриваются проблемы соотношения человека с внешним миром, тема семейных отношений, а также вопросы отчужденности личности от общества. Следует отметить, что на фоне представленных проблем, особое внимание уделяется личным комплексам и общественным нормам, действующим, в частности, в пригороде, в больших городах. Актуальность данной работы обусловлена проблемами затронутыми в произведениях Чивера, которые рассматриваются в социально-личностной парадигме, семейные проблемы выходят за рамки межличностного конфликта и становятся причиной отчуждения индивида в обществе.

Диссертация состоит из введения, трех глав и заключения. В первом подзаголовке первой главы представлены противоречия, возникшие из социальных проблем Америки, отображенные во внутреннем и внешнем мирах человека.

Во втором подзаголовке рассматривается тема соотношения человека с внешним миром. Вторая глава посвящена теме семьи и отчужденного индивида. Здесь же акцентируются вопросы семейных отношений и влияния пригорода на формирование норм и вкусов в данной среде.

Третья глава представляет своеобразный экскурс в мир американского пригорода, с его нормами и кодексами, а также особенности мировоззрения героев Чивера в этих условиях.

Изучив тематику проблем рассказов Джона Чивера, мы пришли к следующим выводам:

- В послевоенный период в американской литературе жизнь американца среднего класса представлена в контрастной сложности его быта. Семья и социум в произведениях Чивера становятся краеугольными камнями для понимания природы человека, где кажущаяся безопасность мира сменяется внутренним психическим напряжением.
- Джон Чивер пытается проникнуть в суть общественных противоречий Америки и выявить корни общественного опустошения человека.
- Герои Чивера решают проблемы финансового благосостояния, но не способны решить проблему внутреннего отчуждения.
- В рассказах Чивера прослеживается противоречие между психологией современного человека и технологизацией общества.
- Американский пригород в рассказах Чивера имеет особое значение, здесь персонажи Чивера сталкиваются с многочисленными вопросами морали и проявления свободного выбора. Но несмотря на эти разногласия, Чиверу удается разрешить конфликт и вернуть своего героя в тихий и безопасный пригород.

«The main problems of John Cheever's short story»

SUMMARY

The Dissertation is dedicated to the problems of American writer John William Cheever's (1912-1984) short prose. The main purpose of this work is to study the problematic themes of John Cheever's stories. The thematic issues of Cheever's the prose have been gathered and presented in details by the means of using numerous literary studies and critical articles. Literary comparative analysis as well as comparative historical and logical methods are used in the dissertation. For the first time, we have an opportunity to get acquainted with the topics covered in John Cheever's stories like social issues, contradictory of materialism and spirituality, family problems, discordances between spouses, human isolation issues that are quite modern. The Dissertation consists of the introduction, the three chapters and the conclusion. The first subchapter of the first chapter presents the contradictions arising from the social problems of America, which are expressed in a person's inner and external world. The second subchapter examines the theme of human and external world correlation. The second chapter deals with the topic of the family and the isolated person. In the first part of the second chapter, our goal is to examine the reference to family themes in Cheever's stories, relationships between husband and wife, the inner impulses of the person, which are limited by the suburban environment and moral influence. The second part examines a person, who has complexes not only with himself, but also in the relationship with others. The first subchapter of the third chapter examines the American suburbs, the inner laws of the suburbs, the regulations and the image of a man who opposes them. The second subchapter refers to the peculiarities of human's way of thinking and behavior in the American suburb, which are conditioned by suburban laws.

Studying the theme of John Cheever's short prose problems I came to the following conclusions:

- In the post-war American story telling, the middle class American's life is presented with the fullness and diversity of its contrasts and complexities. The contradictions arising from the social status are characterized not only by the relationship between man and the outer world, but also in his inner world. Although, the characters of Cheever form an outward appearance of peace and security, are spiritually and emotionally concerned. This intense mental condition leads to a state of incompleteness that is expressed differently in marital life, such as alcoholism and financial instability. The majority of the issues that Cheever touches have general essence.

- John Cheever tries to penetrate into the essence of post-war America's social contradictions, to understand why people's financial situation is connected with a spiritual decline, and the development of science and technology segregates people from each other. Cheever is concerned about the spiritual emptiness of man, the absence of his ideas, the existence of the human being without a purpose, its moral decline, and the isolated situation of the modern society. He tries to understand why the assured Americans become alcoholics, addicts and transgressors. He criticizes them and shows sympathy at the same time.

- Everyone in John Cheever's suburb strives to save wealth. People are segregated from each other and are coiled with the sense of loneliness. The main reason is that they live

in the world of false values and have no way to get out. Cheever mainly depicts a middle class man, who has serious disagreements with his family members, wife, children, and parents due to financial problems. For this main reason he is deprived of family warmth, which deepens his mental decline. Cheever refers to the position of a woman in the society. The women in his stories are mainly in the position of housewives, engaged with the obligation to care about the children, though they put every effort to get out from the everyday bothers.

- In his stories, John Cheever also emphasizes the discrepancy between modern American psychology and technology development. It turns out, that man has a fear of present civilization, which creates a sense of hopelessness and instability. The fear of communicating and expressing internal emotions aggravates his stressful state more. They are not ready for the modern civilization morally and mentally, that is why, the so called “civilization” seems to be absurd, anti-human, ridiculous, and beyond human logic. From here, the grotesque discrepancy of causes and consequences is born, especially in the episodes of the stories, where the heroes try to resist the imposed rules of modern life. Cheever’s hero, facing chaotic reality, gets out of the difficult situation, comforting himself by the appearance of dreams or visions, as an alternative to chaotic world.

- The heroes of Cheever’s stories have inner disagreements not only with their family members, but also in the external world. It becomes clear that a person has problems not only in the mentioned environments, but also with himself, being in continual search. Such phenomena as loneliness, alienation from the society, lack of love, inner mazy situation show up. Cheever wants to say, that a person and a family are correlated. Without family completeness and fullness a man cannot be complete and full.

- The suburb and the Cheever’s characters are directly correlated. Man is not free in suburban patterns, so, he can not live independently, and if suddenly he tries to become independent, he faces obstacles. In spite of the suburban disagreements, the ending of Cheever’s stories is optimistic. After overcoming the internal crisis or conflict, his heroes ultimately decide to return to the seeming safety of the suburb and find peace here.

A handwritten signature in dark ink, appearing to read "W. Cheever". The signature is stylized and cursive, with a large, prominent "B" at the end.

